Հավելված №3
«16» «հունվարի» 2023թ. կնքված
№ ՇՄՆ-ԴՇ-23/03 պայմանագրի

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
Շրջակա միջավայրի նախարարություն
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք
ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011007789
ՀՎՀՀ 02507198

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ
ք.Սևան, Կարմիր Բանակի 56
ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900018002890
ՀՎՀՀ 08602899

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №1
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«05 » « ապրիլի » 2023թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ***Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագիր***

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «16» «հունվարի» 2023թ.

Պայմանագրի համարը՝ ՇՄՆ-ԴՇ-23/03

Պետական մարմինը՝ ի դեմս գլխավոր քարտուղար Գ.Գուլյանի և Կազմակերպությունը՝ ի դեմս «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրենի պ/կ Կ.Մնացականյանի, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կազմակերպությունը «03» «հունվարի» 2023 թվականից մինչև «31» «մարտի» 2023 թվականն ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ միջոցառումները.

№	Իրականացված միջոցառման							
	անվանումը	համառոտ բովանդակությունը	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները		քանակական կամ արդյունքային ցուցանիշները		Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)
			ըստ պայմանագրի	փաստացի	ըստ պայմանագրի	փաստացի	
1	«Սևան» ազգային պարկի պահպանություն	Ազգային պարկի տարածքում պահպանության ընդհանուր միջոցառումների իրականացում: Պահաբաժիններում գարնանային և աշնանային ներքևյան և վերստուգիչ ստուգումներ: Ազգային պարկի բնական էկոհամակարգերի լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, բնական տեսակների գենոֆոնդի, բնության ժառանգության, պահպանություն, պաշտպանություն ազգային պարկի ամբողջ տարածքում: Հրդեհային անվտանգության միջոցառումների իրականացում: Հանրային լողափերի կազմակերպում:	Պատշաճ պահպանություն: Արդյունագործական ձկնորսության սպասարկման մուտքի և ելքի կետերի ընդհանուր թիվը՝ 25: Ապօրինի ձկնորսության և խեցգետնի ապօրինի որսի, ապօրինի շինարարության, ռելիեֆի խախտման, ապօրինի ծառահատման, ապօրինի աղբաթափման, ապօրինի արածեցման և այլ իրավախախտումների բացառում: Հանրության իրազեկում «Սևան» ազգային պարկի հարակից 41 համայնքներում: Հրդեհների կանխարգելում: Հանրային լողափերի քանակը՝ 3, 2022 թվականի ընթացքում հանրային լողափերի ընդհանուր թիվը՝ 90000 մարդ:	Իրականացվել է ՊՈՒԱԿ-ի տնօրինության՝ ԲՀՊ տարածքներում գտնվող բնական էկոհամակարգերի լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության պահպանություն, 147343 հա: Արդյունագործական ձկնորսության մուտքի և ելքի կետերի ընդհանուր թիվը՝ 25: ՊՈՒԱԿ-ի հատուկ նշանակության ջոկատի կողմից իրականացվում է շուրջօրյա հսկողություն և հայտնաբերված իրավախախտումները արձանագրվում են: Իրականացվել են հանրության իրազեկման աշխատանքներ «Սևան» ազգային պարկի հարակից 41 համայնքներում: «Սևան» ազգային պարկ» ՊՈՒԱԿ-ի կողմից կազմվել է «Սևան» ազգային պարկ» ՊՈՒԱԿ-ի հրդեհների արձագանքման պլան, որը համաձայնեցվել է ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության համապատասխան տարածքային ստորաբաժանման հետ և հաստատվել ՊՈՒԱԿ-ի տնօրենի կողմից: Գործող հանրային լողափերի քանակը՝ 3, 2022 թվականի ընթացքում հանրային լողափերի ընդհանուր թիվը՝ 90000 մարդ:	ՊՈՒԱԿ-ի տնօրինության՝ ԲՀՊ տարածքներում գտնվող բնական էկոհամակարգերի լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության պահպանություն, 147343 հա: Ազգային պարկի տարածքում գտնվող հանրային լողափերի սպասարկում և պահպանում, հանրային լողափերի քանակը, 3 հատ, 2022 թվականի ընթացքում հանրային լողափերի ընդհանուր թիվը՝ 90000 մարդ:	ՊՈՒԱԿ-ի տնօրինության՝ ԲՀՊ տարածքներում գտնվող բնական էկոհամակարգերի լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության պահպանություն, 147343 հա: Արդյունագործական ձկնորսության պայմանագրեր 2023 թվականի համար դեռ չեն կնքվել: Ապօրինի շինարարության՝ 2 դեպք, ռելիեֆի խախտման՝ 11 դեպք, ը, ապօրինի ծառահատման՝ 11, ապօրինի ձկնորսական ցանցերի տեղադրման՝ 4 դեպք և 1 աղբաթափման դեպք: Իրականացվել են հանրության իրազեկման աշխատանքներ «Սևան» ազգային պարկի հարակից 41 համայնքներում: Առաջին եռամսյակում պարկի տարածքում հրդեհներ չեն արձանագրվել : Ազգային պարկի տարածքում գտնվող հանրային լողափերի սպասարկում և պահպանում, հանրային լողափերի քանակը՝ 3 հատ: Չկահավորված № 4, №5, № 6, № 7 և № 8 հանրային լողափերի համար հայտարարված մրցույթներում հաղթողներ են ճանաչվել № 4, №5 և № 6 լողափերի համար: Հաղթողների հետ կնքվել են լողափերի բարեկարգման, սպասարկման և կահավորման պայմանագրեր և ներկայումս ընթանում են նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ:	79,375.5
		Աշխատանքային պլաններով նախատեսված գիտական հետազոտությունների իրականացում, հարող բնակավայրերի բնակչության շրջաններում էկոլոգիական իրազեկություն, էկոդաստիարակութուն	Սևանա լիճ թափվող գետերի և Սևանա լճի ջրի որակի վերաբերյալ արդյունքների վերլուծություն	Պատրաստվել և տպագրության է ներկայացվել Սևանա լճի և լիճ թափվող գետերի ջրերի որակի վերաբերյալ գիտական հոդված;	Գիտական ուսումնասիրությունների և հետազոտությունների վերաբերյալ հաշվետվությունների թիվը, հատ, 1	Գիտական ուսումնասիրությունների և հետազոտությունների վերաբերյալ հաշվետվությունների թիվը, հատ, 1	

			Ձկների կենսաբանական ցուցանիշների, դրանց տարածական տեղաբաշխման և կենսապայմանների, խեցգետնի վերարտադրման առանձնահատկությունների, պոպուլյացիաների չափատարիքային և սեռական կառուցվածքի, բազմացման ժամանակաշրջանների, բեղունության ցուցանիշների վերլուծություն	Ձկների կենսաբանական ցուցանիշների, դրանց տարածական տեղաբաշխման և կենսապայմանների, խեցգետնի վերարտադրման առանձնահատկությունների, պոպուլյացիաների չափատարիքային և սեռական կառուցվածքի, բազմացման ժամանակաշրջանների, բեղունության ցուցանիշների վերլուծություն	Նախարարության կայքում հրապարակված գիտական ուսումնասիրությունների և հետազոտությունների վերաբերյալ հաշվետվությունների թիվը, հատ 1	Նախարարության կայքում գիտական ուսումնասիրությունների և հետազոտությունների վերաբերյալ թվով 1 հաշվետվությունը հրապարակվել է շրջակա միջավայրի նախարարության կայքում	
2	Պարկի տարածքում գիտական հետազոտություններ	Ազգային պարկի թանգարանի աշխատանքների կազմակերպում և իրականացում	«Սևան» ազգային պարկի տարածքին սահմանակից 41 համայնքների բնակիչների էկոլոգիական իրազեկվածության մակարդակի բարձրացում, 3 միջոցառում, մասնակիցների թիվը 200	«Սևան» ազգային պարկի տարածքին սահմանակից 41 համայնքների բնակիչների էկոլոգիական իրազեկվածության մակարդակի բարձրացում, 5 միջոցառում, մասնակիցների թիվը 218	Բնակչության էկոլոգիական կրթության ու դաստիարակությանն ուղղված միջոցառումների թիվը, հատ 3	Բնակչության էկոլոգիական կրթության ու դաստիարակության ուղղված միջոցառումների թիվը շահառու 218: Դպրոցահասակ երեխաներին և տարբեր շերտերին հետաքրքրող թեմաների բազմազանությամբ պայմանավորված միջոցառումների և մասնակիցների քանակը պլանայինից ավել է:	7,020.4
			Գիտական ուսումնասիրությունների և մոնիթորինգի իրականացման ընթացքում ստացված տվյալների հավաքագրում, դասակարգում, տարածքների և բնական պաշարների օգտագործման հաշվառում, ամփոփում և վերլուծություն	Գիտական ուսումնասիրությունների և մոնիթորինգի իրականացման ընթացքում ստացված տվյալների հավաքագրում, դասակարգում, տարածքների և բնական պաշարների օգտագործման հաշվառում, ամփոփում և վերլուծություն	Էկոլոգիական կրթությանն ու դաստիարակությանն ուղղված միջոցառումների մասնակիցների թիվը շահառու 300:	ՊՈՒԱԿ-ի այցելուների կենտրոնում առաջին եռամսյակում այցելուների թիվը կազմել է 726՝ ներառյալ միջացառումների մասնակիցների թիվը:	
			Յուրաքանչյուր եռամսյակ մեկ հաշվետվություն: Հաշվետվությունների ընդհանուր թիվը՝ 4:	ՊՈՒԱԿ-ի այցելուների կենտրոնում իրականացվում է բուսական ու կենդանական աշխարհի ներկայացուցիչների պատշաճ ցուցադրում:			
			Բուսական ու կենդանական աշխարհի ներկայացուցիչների պատշաճ ցուցադրում				
3	Պարկի տարածքում անտառտնտեսական աշխատանքներ	Անտառագիտական և անտառտնտեսական միջոցառումներ՝ անտառվերականգնողական և անտառոտնկման աշխատանքներ, խախտված էկոհամակարգերի վերականգնմանն ուղղված միջոցառումներ	Տնկարկների խնամք և անտառվերականգնողական աշխատանքներ՝ 5 հա անտառոտնկում	2023 թվականի ընթացքում նախատեսվում է իրականացնել 5 հա անտառոտնկում՝ 10 000 հատ բարդի տեսակի տնկիներով:	Անտառպատման աշխատանքների իրականացում, հա 5	Տնկարանային տնտեսությունում խնամվում է ավելի քան 10000 տնկի, որոնք նախատեսվում է օգտագործել 2023 թվականին նախատեսվող ծառատնկման աշխատանքներում: Վարդենիսի մասնաճյուղի Վարդենիս տեղամասի 15-րդ քառակուսում գտնվող բացատներում շուրջ 5 հա մակերեսով տարածքի վրա նախատեսվում է իրականացնել անտառապատման աշխատանքներ: Կատարվել է նշված տեղանքի քարտեզագրում և ներկայացվել է շրջակա միջավայրի նախարարություն:	

4	Սևանա լճի ջրածածկ անտառոտկարկ ների մաքրում	Սևանա լճի ջրածածկ և ջրածածկման ենթակա տարածքներում թփերի, մացառների, ծառերի և կոճղերի արմատախիլ անում, անտառանյութի մասնատում և տեղափոխում	Բնական ռեսուրսների արդյունավետ կառավարման պայմանների ապահովում, բույսերի և կենդանիների պահպանություն և վերարտադրության աճի ապահովում Մեքենա-սարքավորումների միջոցով Սևանա լճի ջրածածկ և ջրածածկման ենթակա տարածքների պատշաճ մաքրման աշխատանքների իրականացում, մաքրման ենթակա տարածքները տարեկան սահմանված չափը՝ 89 հա:	Բնական ռեսուրսների արդյունավետ կառավարման պայմանների ապահովում, բույսերի և կենդանիների պահպանություն և վերարտադրության աճի ապահովում	Սևանա լճի ջրածածկ անտառոտկարկների մաքրում, 15 հա	Մաքրման աշխատանքներ չեն իրականացվել, քանի որ ներկայումս իրականացվում են մաքրման տարածքների ճշգրտման աշխատանքներ:	
ԸՆԴԱՄԵՆԸ							86,395.9

ՀԱՆՁՆԵՑ

ստորագրություն
Գ. Մանգասարյան
ազգանուն, անուն

Կ.Տ.

ԸՆԴՈՒՆԵՑ

ստորագրություն
Գ. Գրույան
ազգանուն, անուն

Կ.Տ.

ՄԱՍ 2. ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳԾՈՎ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ (ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ) ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Ծրագրի դասիչը	Ծրագրի անվանումը
1155	*Բնական պաշարների և բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարում և պահպանում*

Ծրագրի միջոցառումները

Ծրագրի դասիչը՝		*1155*	**ՊԼԱՆԱՅԻՆ** ցուցանիշներ				**ՓԱՍՏԱՑԻ** ցուցանիշներ				Ծրագրային ցուցանիշից փաստացի կատարողականի շեղման պարզաբանումը
Միջոցառման դասիչը՝		*11004*									
Միջոցառման անվանումը՝		*«Սևան» ազգային պարկի պահպանության, պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառատնտեսական աշխատանքների կատարում*									
Նկարագրությունը՝		*«Սևան» ազգային պարկի տարածքում պահպանության, գիտական ուսումնասիրությունների, անտառատնտեսական աշխատանքների իրականացում*									
Միջոցառման տեսակը՝		*Ծառայությունների մատուցում*									
Միջոցառումն իրականացնողի անվանումը՝		*Մասնագիտացված կազմակերպություններ*									
Արդյունքի չափորոշիչներ			Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի	
Քանակական	*ՊՈՒԱԿ-ի փնօրինության՝ ԲՀՊ տարածքներում գտնվող բնական էկոհամակարգերի լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության պահպանություն, հա*		*147343*	*147343*	*147343*	*147343*	*147343*				
Քանակական	*Գիտական ուսումնասիրությունների և հետազոտությունների վերաբերյալ հաշվետվությունների թիվը, հատ*		*1*	*2*	*3*	*4*	*1*				
Քանակական	*Նախարարության կայքում հրապարակված գիտական ուսումնասիրությունների և հետազոտությունների վերաբերյալ հաշվետվությունների թիվը, հատ*		*1*	*2*	*3*	*4*	*1*				
Քանակական	*Բնակչության էկոլոգիական կրթությանն ու դաստիարակությանն ուղղված միջոցառումների թիվը, հատ*		*3*	*6*	*9*	*12*	*5*				Հանրությանն իրազեկելու և դպրոցահասակ երեխաների շրջանում էկոկրթության մակարդակի բարձրացման նպատակով իրականացվել են պլանայինից ավելի միջոցառումներ:
Քանակական	*էկոլոգիական կրթությանն ու դաստիարակությանն ուղղված միջոցառումների մասնակիցների թիվը, շահառու*		*200*	*700*	*1200*	*1500*	*218*				Միջոցառումների քանակը պլանայինից ավել լինելու պատճառով մասնակիցների քանակը պլանային ավել է եղել:
Քանակական	*Ազգային պարկի տարածքում գտնվող հանրային լողափերի սպասարկում և պահպանում, հանրային լողափերի քանակը, հատ*		*0*	*3*	*3*	*3*	*0*				
Քանակական	*Ազգային պարկի տարածքում գտնվող հանրային լողափեր, այցելուների թիվը, մարդ*		*0*	*15000*	*90000*	*90000*	*0*				

Քանակական	*Խախտված էկոհամակարգերի վերականգնմանն ուղղված միջոցառումների (անտառտնկում, գեղարքունի մանրածաղկան աճեցում և բացթողում) թիվը, հատ*	*0*	*1*	*1*	*2*	*0*				
Քանակական	*Անտառապատման աշխատանքների իրականացում, հա*	*0*	*5*	*5*	*5*	*0*				
Քանակական	*Տնկարանային փնտեսությունում աճեցված փնկիների թիվը, հատ*	*0*	*10000*	*10000*	*10000*	*0*				
Քանակական	*Սևանա լճում արդյունագործական ձկնորսության սպասարկման մուրքի և ելքի կետերի թիվը, հատ*	*25*	*25*	*25*	*25*	*25*				Արդյունագործական ձկնորսության պայմանագրեր 2023 թվականի համար դեռևս
Քանակական	*Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրում, հա*	*15*	*40*	*62*	*89*	*0*				Առաջին եռամսյակում իրականացվել են մաքրման աշխատանքների տարածքների մակերեսների ճշգրտման աշխատանքներ:
Որակական	*Մաքրված տարածքների մասնաբաժինը մաքրման ենթակա / 2022թ/1590.43 հա/ տարածքներում, տոկոս*	*0,9*	*2,5*	*3,9*	*5,6*	*0*				
Որակական	*ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված «Սևան» ազգային պարկի տարեկան համալիր ծրագրով վերապահված միջոցառումների կատարման մակարդակը, տոկոս*	*0*	*0*	*0*	*100*	*0*				

Միջոցառման վրա կատարվող ծախսը (հազար դրամ)	***86 395,9***	***194 390,7***	***302 385,6***	***431 979,4***	*86 395,90*				

2023թ. առաջին եռամսյակի

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի

կողմից կատարված աշխատանքների

Հաշվետվություն

1. «Սևան» ազգային պարկի պահպանություն.

Պահպանության ծառայություններ, աշխատակիցների կողմից պարկի տարածքի արգելոցների և արգելավայրերի տարածքներում ստուգումների և շուրջօրյա հերթապահությունների միջոցով.

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի մասնաճյուղերի աշխատողների և հատուկ նշանակության ջոկատի կողմից իրականացվել է ամենօրյա, ինչպես նաև հատուկ նշանակության ջոկատի կողմից շուրջօրյա հսկողություն՝ անտառային օրենսդրության խախտումների և այլ բնապահպանական խախտումների կանխարգելման, հայտնաբերման ուղղությամբ:

2023 թվականի առաջին եռամսյակի ընթացքում արձանագրվել է բնապահպանական խախտման 29 դեպք, որից 2-ը՝ ապօրինի շինարարության, 11-ը՝ ռելիեֆի խախտման, 11-ը՝ ապօրինի ծառահատման, 4-ը՝ ձկնորսական ցանցերի ապօրինի տեղադրման, 1-ը աղբաթափման դեպք:

Հայտնաբերված բոլոր իրավախախտումների վերաբերյալ կազմվել են արձանագրություններ և ուղարկվել են իրավասու մարմիններին՝ համապատասխան ընթացք տալու, իրավախախտողին հայտնաբերելու և պատասխանատվության ենթարկելու համար:

2023թ. առաջին եռամսյակի ընթացքում պարկի տարածքում հրդեհների դեպքեր չեն արձանագրվել:

Սևանա լճում սիգի ձվադրման ժամանակահատվածում՝ 2022 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2023 թվականի հունվարի 20-ը ներառյալ «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի և մի շարք գերատեսչությունների հետ համատեղ իրականացվել են համատեղ միջոցառումներ խստացված ռեժիմով սիգի որսը կանխելու նպատակով:

Իրականացվել են ձկների ձվադրման ժամանակահատվածում որսի արգելքի կարևորություն վերաբերյալ բացատրական աշխատանքներ բնակչության լայն խավերի շրջանակներում, կազմակերպվել և իրականացվել են հանդիպումներ ձկնորսների հետ, իրականացվել են լողամիջոցների, որսագործիքների և ժամանակավոր կացարանների դուրս բերման աշխատանքներ:

2. Պարկի տարածքում գիտական հետազոտություններ.

2023թ. առաջին եռամսյակում հիդրոկենսաբանի կողմից հետազոտություններ կատարելու համար իրականացվել են նախապատրաստական աշխատանքներ: Պատրաստվել և տպագրության է ներկայացվել Սևանա լճի և լիճ թափվող գետերի ջրերի որակի վերաբերյալ հոդված:

2023թ. առաջին եռամսյակում գլխավոր ձկնաբան-ձկնաբույծի կողմից Սևանա լճում ուսումնասիրություն է կատարվել Սևանա լճի ձկնատեսակների կենսաբանական վիճակի վերաբերյալ:

Սիգ- 2023թ. առաջին եռամսյակում Սևանա լճում ձկնաբանական ուսումնասիրություններ են իրականացվել՝ Ծովագյուղ, Շորժա, Ծովազարդ, Նորատուս, Ջիլ համայնքների ջրային տարածքներում, որոնք հանդիսանում են սիգ ձկնատեսակի ինտենսիվ արդյունահանման վայր: Լճում կատարված

ձկնաբանական հետազոտությունների ընթացքում սիգի տարածական բաշխվածության ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Սևանա լճի ափամերձ գոտու ամբողջ երկայնքով հունվար ամսին ձվադրած IV-V սեռահասունության փուլում գտնվող վերարտադրող սիգ տեսակի ձկների ձևավորված վտառները գտնվել են հիմնականում ափամերձ գոտում՝ 10-15 մետր խորություններում:

Հունվար-փետրվար ամիսներին վերը նշված ջրային տարածքներից հանված դնովի ցանցերի մեջ եղած ձկների չափսերը փոքր Սևանում տատանվել են՝ 30,9-33,7 սմ., կշիռը՝ 388,8-469,3 գրամ: Բտվածության միջին գործակիցը՝ F = 1,17-1,24, K = 1,01-1,14 (Ծովազարդ, Շորժա): Մեծ Սևանում ձկների չափսերը տատանվել են՝ 32,4-34,1սմ., կշիռը՝ 406,1-471,4 գրամ: Բտվածության միջին գործակիցը՝ F = 1,16-1,26, K = 1,01 - 1,16 (Նորատուս, Ջիլ):

Մարտ ամսին փորձանմուշ են հանդիսացել 42 x 42 մմ. դնովի ցանցերով որսված սիգ ձկնատեսակի՝ 45 առանձնյակ: Ուսումնասիրվող ձկների միջին երկարությունը կազմել է՝ 30,8սմ., միջին կշիռը՝ 402,0 գրամ: Բտվածության միջին գործակիցը՝ F = 1,26, K = 1,14 (փ. Սևան, Ծովագյուղ): Սիգի սննդառության առանձնահատկությունների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ուսումնսիրվող՝ 75 առանձնյակների աղեստամոքսային տրակտում հանդիպել են թիոտանի խեցգետնակերպեր, կողալողեր փափկամարմիններ և սիգի ձկնկիթ:

Սիգի միջին բեղունությունը ուսումնասիրվող ժամանակահատվածում կազմել է՝ 14100-45130 հատ ձկնկիթ;

Ուսումնասիրվող ժամանակահատվածում ջրի ջերմաստիճանը Սևանա լճում տատանվել է՝ 2,5 - 3,8^{0}C:

Խեցգետին- Առաջին եռամսյակում Սևանա լճում իրականացվել է խեցգետնային համակեցության էկոլոգիական հետազոտություններ: Ուսումնասիրություններ է կատարվել փոքր Սևանի Ծովազարդ համայնքի ջրային տարածքում: Ձեռք բերված փորձանյութի մշակման արդյունքում ստացվել են պոպուլյացիայի չափատարիքային, սեռական կառուցվածքի և ֆիզիոլոգիական վիճակի մասին տվյալներ:

Սևանա լճում խեցգետնի վերարտադրման ընթացքի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ձվադրման գործընթացը սկսվել է փետրվարի սկզբին: Լճում (Ծովազարդի ջրային տարածք) խեցգետնի բեղմնավորված ձվերով էգեր հայտնաբերվել են փետրվարի երկրորդ տասնօրյակին, երբ ջրի ջերմաստիճանը լճի հատակային շերտերում տատանվել է՝ 2,0-2,6^{0}C սահմաններում:

Ուսումնասիրվող տարածքում, որսաբաժնում արուների թվաքանակը գերակշռում է էգերի համեմատ: Արուների հարաբերակցությունը կազմում է մոտ՝ 2 : 1 : Այս հարաբերակցությունը վկայում է գարնանը արուների մեծ ակտիվության մասին:

Արուների ակտիվության և որսագործիքների ընտրողականության հետևանքով, թակարդների մեջ հիմնականում ընկնում են առավել ակտիվ կենդանիները:

Խեցգետնի ձևաչափական ցուցանիշների հետազոտությունները ցույց են տվել, որ արու խեցգետինների միջին երկարությունը՝ 9,7 սմ. է, քաշը՝ 25,0 գրամ, էգերի համար համապատասխանաբար ցուցանիշները՝ 10,0 սմ., քաշը՝ 23,8 գրամ (փոքր Սևան, Ծովազարդ): Տարիքային խմբերը կազմել են՝ 2-4 տարեկան խեցգետինները: Խորությունների ընտրությունը կատարվել է հաշվի առնելով խեցգետինների տարածվածության սահմանները:

Բեղմնավորմանը մասնակցած էգ առանձնյակների նվազագույն երկարությունը եղել է՝ 8,0 սմ, առավելագույնը՝ 11,4 սմ.: Բեղմնավորված այս հիդրոբիոնտները հիմնականում կենտրոնացված էին 2-5 մետր խորություններում:

-Կադաստրի վարման գլխավոր մասնագետի կողմից 2023թ. առաջին եռամսյակի ընթացքում ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ կնքվել է 5 համաձայնագիր՝ վարձավճարի փոփոխության վերաբերյալ, 2 համաձայնագիր՝ հողամասի մակերեսի փոփոխության վերաբերյալ, 5 հողօգտագործողների պայմանագրային փաթեթներում կատարվել է տվյալների փոփոխություն, կատարվել է թվով 3 նոր պայմանագրերի հաշվառում: Կատարված փոփոխությունների վերաբերյալ ուղղումներ են կատարվել տվյալների բազայում:

Հողօգտագործողների կողմից տարբեր խնդրանքներով (ներդրումային ծրագրեր իրականացնելու, հողամասը օտարելու, նոր պայմանագրեր կնքելու, հողամասը ենթավարձակալությամբ տրամադրելու, գույքի բաժանում կատարելու և այլն) «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ ներկայացրած դիմումները քննարկվել են «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի խորհրդի նիստում և դրանց տրվել է համապատասխան ընթացք:

Համաձայն «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատարի 2023 թվականի հունվարի 24-ի №31-Լ հրամանի՝ ստեղծված աշխատանքային խմբի կողմից «Սևան» ազգային պարկի Արտանիշի մասնաճյուղի Սևանա լճի ափամերձ՝ մինչև 1901,5 բացարձակ նիշն ընկած տարածքներում կատարվել են գույքագրման աշխատանքներ: «Սևան» ազգային պարկի Արտանիշի մասնաճյուղի Սևանա լճի ափամերձ՝ 1901,5 բացարձակ նիշն ընկած տարածքում գույքագրվել է թվով 221 միավոր, իսկ 1901,5-ից մինչև 1905,0 նիշն ընկած հատվածում՝ 337 միավոր գույք, որը համապատասխան կարգով ներկայացվել է շրջակա միջավայրի նախարարություն:

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի հողաշինարարը մասնակցել է թվով 3 ՇՄԱԳ փորձաքննության լսումների, իրականացրել հողամասերի տեղադիրքերի ճշգրտում ըստ կոորդինատների:

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից պատրաստվել են թվով 6 հողամասերի մրցութային փաթեթներ և ներկայացվել ՀՀ կառավարության 2008թ. դեկտեմբերի 18-ի N 1578-Ն «Բնության հատուկ պահպանվող տարածքների հողամասերը վարձակալության եվ (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով միջգերատեսչական մրցութային հանձնաժողով ստեղծելու եվ միջգերատեսչական մրցութային հանձնաժողովի աշխատակարգը հաստատելու մասին» որոշմամբ ստեղծված միջգերատեսչական մրցութային հանձնաժողովի քննարկմանը:

-Պարկի տարածքում անտառտնտեսական աշխատանքներ.

Մասնաճյուղերի կողմից անհրաժեշտությամբ պայմանավորված անտառգիտական և անտառտնտեսական միջոցառումներ, սանիտարական հատումներ և խնամքի աշխատանքներ.

Համաձայն շրջակա միջավայրի նախարարի տեղակալի 2023 թվականի հունվարի 30-ի №Ն/16.10/777 հանձնարարականի՝ իրականացվել է «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի Մարտունու մասնաճյուղի Վարդենիկ և Ծովինար տեղամասերում իրականացված ջրածածկ և ջրածածկման ենթակա տարածքների մաքրման արդյունքում մթերված փայտանյութի (շինափայտ և վառելափայտ) իրացման աշխատանքներ, իսկ ջախը՝ համաձայն շրջակա միջավայրի նախարարի տեղակալի 2022թ. սեպտեմբերի 29-ի N16.11/6976-2022 հանձնարարականի անհատույց տրամադրվել է Մարտունի համայնքի անապահով ընտանիքներին: Վաճառքի և անհատույց տրամադրման աշխատանքները դեռևս ընթանում են: Արդյունքում ջրածածկ և ջրածածկման ենթակա տարածքների մաքրման արդյունքում ՊՈԱԿ-ի պահեստում առկա փայտանյութի մնացորդը 2023թ. ապրիլի 1-ի դրությամբ կազմում է 67,48 մ³ շինափայտ, 70 մ³ չխտացված վառելափայտ, 1,431.52 մ³ջախ:

2022 թվականին սանիտարական հատումների նպատակով հաստատվել է թվով 24 հատատեղ, սակայն հատման աշխատանքները չեն ավարտվել 2022 թվականի ընթացքում և աշխատանքների իրականացման ժամկետը երկարաձգվել է: Թերհատումներն ավարտելու նպատակով դուրս են գրվել №000257, №000258, №000259 անտառհատման տոմսեր: Թերհատումների ծավալը կազմում է 149մ³ փայտանյութ (պահեստային): Մթերման և արտահանման աշխատանքները շարունակվում են:

Սանիտարական հատումների արդյունքում «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի պահեստում առկա փայտանյութի մնացորդը 2023թ. ապրիլի 1-ի դրությամբ կազմում է 244,594 մ³ շինափայտ, 32,25 մ³ չխտացված վառելափայտ, 110,670 մ³ ջախ:

Համաձայն շրջակա միջավայրի նախարարի տեղակալի 2023 թվականի մարտի 13-ի №Ն/16.11/2179 հանձնարարականի իրականացվում են ՊՈԱԿ-ի մասնաճյուղերում «Ֆիտոգելմենտ» որդի տեսակով վարակված սանիտարական հատման ենթակա ծառերի հատատեղերի անձնագրերի և հաշվեգնահատման ցուցակների կազմման նախապատրաստական աշխատանքներ:

«Սևան» ազգային պարկի տնկարանային տնտեսությունում ներկայումս առկա է մոտ 10 000 տնկի, որոնք նախատեսվում է օգտագործել 2023 թվականին նախատեսվող ծառատնկման աշխատանքներում, որը կիրականացվի «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից Վարդենիսի մասնաճյուղի Վարդենիս տեղամասի 15-րդ քառակուսում գտնվող բացատներում շուրջ 5 հա մակերեսով տարածքի վրա: Կատարվել է նշված տեղանքի քարտեզագրում և ներկայացվել է շրջակա միջավայրի նախարարություն: Առաջին եռամսյակում իրականացվել են ծառատունկի համար անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներ:

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվել է ծրագիր ֆինանսական միջոցների առկայության դեպքում «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից 20 հա մակերեսով անտառպատման աշխատանքների իրականացման վերաբերյալ,որի ընթացքում կարող է տնկվել շուրջ 50 000 տնկի: Կատարվել է

համապատասխան տեղանքի քարտեզագրում, որը ներկայացվել է շրջակա միջավայրի նախարարություն:

- **«Սևան» ազգային պարկի տարածքին սահմանակից համայնքների բնակչության շրջանում բացատրական աշխատանքների իրականացում, այցելուների կենտրոնի և տարածքի այցելուներին տեղակատվության տրամադրում.**

2023 թվականի առաջին եռամսյակում ՊՈԱԿ-ի գործունեության առավել կարևոր մանրամասների վերաբերյալ սահմանակից համայնքների բնակչությունը և հանրությունը իրազեկվել է ՊՈԱԿ-ի պաշտոնական կայքէջից:

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի Այցելուների կենտրոնը առաջին եռամսյակում կազմակերպել է հետևյալ միջոցառումները՝ «Երաշտ» թեմայով սեմինար-քննարկում, «Միջատների դերը մարդու կյանքում» ուսուցողական սեմինար և ֆիլմի դիտում, «Սևանա լիճը որպես խմելու ջրի մեծ պաշար» սեմինար և ֆիլմի դիտում, «Քարերի աշխարհ» էքսկուրսիա կենտրոնում, «Գարնանային վարարումներ» սեմինար-քննարկում և ֆիլմի դիտում ջրի համաշխարհային օրվան նվիրված:

Առաջին եռամսյակում «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի Այցելուների կենտրոն է այցելել 726 այցելու, որոնցից 218-ը մասնակցել են վերոնշյալ միջոցառումներին:

3.Ընդհանուր բաժին.

2023 թվականի առաջին եռամսյակում «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ է մուտքագրվել 987 գրություն, որից 271-ը շրջակա միջավայրի նախարարությունից, 716-ը՝ այլ իրավաբանական և ֆիզիկական անձանցից: Ելքագրվել է 939 գրություն, որից 110-ը՝ շրջակա միջավայրի նախարարություն:

Գործավարության կարգին համապատասխան ստացված գրություններն ու նամակները ժամանակին և պատշաճ ձևով մուտքագրվել են գրանցամատյաններում, այնուհետև հանձնվել են տնօրենին՝ մակագրության: Մակագրված գրությունները հանձնվել են համապատասխան բաժիններ: Իրականացվել է հսկողություն դրանց՝ սահմանված ժամկետներում պատասխանելու համար:

2023 թվականի առաջին եռամսյակում «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ում աշխատանքի է ընդունվել 19 մարդ, ազատվել է 30 մարդ, իր ամենամյա նվազագույն արձակուրդից օգտվել է 48 աշխատակից:

Ընդհանուր բաժնի ավագ իրավաբանի և իրավաբանի կողմից 2023թ. առաջին եռամսյակի ընթացքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. Պայմանագրով սահմանված վարձավճարներն ուշացնելու համար 27 ֆիզիկական կամ իրավաբանական անձանց ներկայացվել են պայմանագրերի միակողմանի վաղաժամկետ լուծման վերաբերյալ առաջարկներ: 13 վարձակալներ ստացել են լուծման առաջարկները, 1 լուծման առաջարկի ծրարը վերադարձել է «Մահացած» նշումով, իսկ մնացած 13 լուծման առաջարկները ստանալու վերաբերյալ փոստային անդորրագրերը դեռևս

ՊՈԱԿ-ում առկա չէ: Լուծման առաջարկների արդյունքում ՊՈԱԿ-ի հաշվեհամարին մուտքագրվել է 734 800 ՀՀ վարձավճար:

2. 7 վարձակալների, որոնց հասցեների վերաբերյալ ՊՈԱԿ-ում տեղեկատվություն առկա չէ, պայմանագրերը միակողմանի, վաղաժամկետ լուծման վերաբերյալ առաջարկները տեղադրվել են «Ազդարար» ՀՀ ինտերնետով ծանուցման պաշտոնական կայքում:
3. 31 վարձակալների ներկայացվել են ծանուցումներ՝ Պայմանագրով և/կամ մրցույթի ժամանակ ներկայացված գործարար ծրագրով սահմանված ներդրումային աշխատանքների իրականացման վերաբերյալ համապատասխան հիմքերով տեղեկատվություն ներկայացնելու համար: Ծանուցագրերում նշված ժամկետներում կատարված ներդրումային աշխատանքների վերաբերյալ համապատասխան փաստաթղթերը չներկայացնելու դեպքում ՊՈԱԿ-ը ձեռնամուխ կլինի ներդրումային պարտավորությունները չկատարելու հիմքով պայմանագրերի լուծման գործընթացի մեկնարկին:
4. 4 ֆիզիկական անձանց ներկայացվել է ծանուցումներ պարկի տարածքում գտնվող ինքնակամ կառույցներն սեփական միջոցներով ապամոնտաժելու վերաբերյալ:
5. **ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններ են ներկայացվել՝**
    - 21 հայցադիմում, ընդհանուր՝ 7 304 158 ՀՀ դրամ հայցագնով, որոնցից 9-ը միայն գումարի բռնագանձման պահանջով, 11-ը՝ գումարի բռնագանձման և պայմանագիրը միակողմանի վաղաժամկետ լուծելու պահանջներով, 1-ը՝ միայն պայմանագիրը լուծելու պահանջով:
    - 8 դիմում կատարողական թերթը հարկադիր կատարումն ապահովող ծառայություն ներկայացնելու մասին, ընդհանուր՝ 2 667 571 ՀՀ դրամ բռնագանձման ենթակա գումարի մասով:
    - 1 դիմում վճռի օրինական ուժ ստանալու փաստը 2-րդ կնիքով հաստատելու մասին:
    - 1 քաղաքացիական գործով ապացույց:
    - 2 քաղաքացիական գործով հայցադիմումի պատասխան:
    - 12 հայցից հրաժարվելու մասին դիմումներ՝ հայցադիմումը դատարան ներկայացնելուց հետո հայցապահանջի և նախապես վճարված պետական տուրքի գումարները Պատասխանողների կողմից վճարելու հիմքով:
6. Մասնակցել են 17 քաղաքացիական գործերով դատական նիստերի:
7. Կազմվել է 3 պայմանագրերի (գույքի անհատույց օգտագործման, նվիրատվության և տեխնիկայի վարձակալության) նախագծեր:
8. Դատարան ներկայացված հայցադիմումներից 14-ը բավարարվել է, ընդհանուր՝ 4 563 485 ՀՀ դրամ հայցագնով: Հայցադիմումը դատարան

ներկայացնելուց հետո Պատասխանողների կողմից հայցապահանջի և պետական տուրքի գումարները ամբողջությամբ վճարելուց հետո ՊՈԱԿ-ի կողմից հայցից հրաժարվելու հիմքով 10 քաղաքացիական գործերի վարույթները կարճվել են, ընդհանուր՝ 2 191 830 ՀՀ դրամ հայցագնով:

9. ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան է ներկայացվել մեկ բողոք ՀՀ ընդհանուր իրավասության դատարանի կայացրած դատական ակտի դեմ:
10. Դատական ակտի հարկադիր կատարման փուլում Պատասխանողի կողմից 8 00 000 ՀՀ դրամ վճարելուց հետո կնքվել է հաշտության համաձայնություն և ներկայացվել է ՀԿԱԾ:
11. ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչություն է ներկայացվել 14 գրություններ բնապահպանական իրավախախտումների վերաբերյալ:
12. Աշխատանքային կարգապահությունը խախտելու համար 8 աշխատողներից պահանջվել է գրավոր բացատրություն:
13. Պատասխանվել է շուրջ 50 գրությունների (դիմումների):

4.Ֆինանսահաշվապահական բաժին.

2023 թվականի առաջին եռամսյակում համաձայն շրջակա միջավայրի նախարարության և «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև կնքված N ՇՄՆ-ԴՇ-23/03 պայմանագրի, պարկի պահպանության, պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարման և Սևանա լճի ջրածածկ անատառտնկարկների մաքրման ծառայությունների համար որպես դրամաշնորհ ՊՈԱԿ-ին տրամադրվել է 86,395.9 հազար դրամ (ներառյալ ԱԱՀ), որն ամբողջությամբ ուղղվել է ՊՈԱԿ-ի աշխատակիցների աշխատավարձի վարձատրության համար:

Առաջին եռամսյակի ընթացքում Ֆինանսահաշվապահական բաժնի գանձումների մասնագետի կողմից պարբերաբար տեղեկացվել է վարձակալներին իրենց վարձավճարների մասին և ըստ ՊՈԱԿ-ում առկա տեղեկատվության կազմվել է շուրջ 436 ծանուցումներ՝ «Պետական սեփականություն հանդիսացող հողամասի վարձակալության և/կամ կառուցապատման իրավունքի տրամադրման մասին» իրավաբանական կամ ֆիզիկական անձանց միջև կնքված պայմանագրերով նախատեսված վարձավճարների վերաբերյալ, որի արդյունքում երրորդ եռամսյակի ընթացքում հողի վարձավճարներից մուտքը կազմել է 44,613.49 հազ. դրամ:

5.Տնտեսական սպասարկման բաժին.

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնտեսական սպասարկման բաժնի կողմից 2023թ. առաջին եռամսյակի ընթացքում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

1. Ստորաբաժանումներին է տրամադրվել դիզելային վառելիք, բենզին, գազ, տնտեսական ապրանքներ և գրենական պիտույքներ:

2. Իրականացվել են շենք-շինությունների և հարակից տարածքների մաքրման աշխատանքներ:
3. Իրականացվել է ավտոտրանսպորտի աշխատանքի, վառելիքի և քսայուղերի շարժի հաշվառում:
4. Կազմակերպվել և մյուս բաժինների հետ համատեղ մաքրվել ու բարեկարգվել է <<Սևան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ի վարչական շենքի հարակից տարածքը, հանրային լողափներում կատարվել է մաքրման ճանապարհների հարթեցման և բարեկարգման աշխատանքներ:
5. Ապահովվել է խմելու ջրի, բնական գազի և էլեկտրաէներգիայի սպառման սարքավորումների անխափան աշխատանքը:
6. Պահպանության բաժնի աշխատակիցների հետ համատեղ կատարվել են հանրային լողափների բարեկարգման աշխատանքներ, հավաքվել և տեղափոխվել է կենցաղային աղբը:
7. Իրականացվել է տրանսպորտային միջոցների մասին թերությունների ակտեր, տեխնիկական բնութագրեր և ներկայացվել են համապատասխան գնման ընթացակարգեր կազմակերպելու համար:
8. Անցկացվել է թվով 10 ավտոմեքենաների տեխնիկական զննություն և կնքվել 15 ավտոմեքենաների ԱՊՊԱ պայմանագրեր:

«Սևան» ազգային պարկ»
ՊՈԱԿ-ի տնօրենի պ/կ _____Կ. Մնացականյան

ստորագրություն

Հավելված №1
«16» «հունվարի » 2023թ. կնքված
№ ՇՄՆ-ԴԾ-23/03 պայմանագրի

«16» հունվարի 2023թ. կնքված N ՇՄՆ-ԴԾ-23/03 պայմանագրի «Սևան» ազգային Պարկ» ՊՈԱԿ-ի «Պահպանության, գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարման ծառայություններ» ծրագրի շրջանակում 2023թ.-ի 1-եռամսյակում իրականացված միջոցառումների մասին

հ/հ	Իրականացվելիք միջոցառման					
	անվանումը	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնա-ժամկետը	Պահանջվող գումարը (դրամ)
1	«Սևան» ազգային պարկի պահպանություն	1.1 Ազգային պարկի տարածքում պահպանության ընդհանուր միջոցառումների իրականացում: 1.2 ազգային պարկի ամբողջ տարածքում բնական էկոհամակարգերի լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, գենոֆոնդի, բնության ժառանգության պահպանություն, պաշտպանություն և օգտագործման վերահսկողություն: 1.3 Պահաբաժիններում գարնանային և աշնանային հերթական և վերստուգիչ ստուգումներ: 1.4 Հրդեհային անվտանգության միջոցառումների իրականացում: 1.5 Հանրային լողափերում սպասարկման, կազմակերպման ապահովում:	Պահպանության ծառայություններ աշխատակիցների կողմից պարկի տարածքում տարածքներում ստուգումների և շուրջօրյա հերթապահությունների միջոցով: Արդյունագործական ձկնորսության սպասարկման մուտքի և ելքի կետերի աշխատանքի կազմակերպում: Մասնաճյուղերի կողմից պահաբաժիններում գարնանային և աշնանային հերթական և վերստուգիչ ստուգումների իրականացում: «Սևան» ազգային պարկի տարածքին սահմանակից համայնքների բնակչության շրջանում հակահրդեհային բացատրական աշխատանքների իրականացում, Հակահրդեհային ճանապարհների ընթացիկ նորոգում:	Իրականացվել է ՊՈԱԿ-ի տնօրինության՝ ԲՀՊ տարածքում գտնվող բնական էկոհամակարգերի լանդշաֆտային և կենսաբանական բազմամազանության, բնության ժառանգության պահպանություն, 147343 հա: Արդյունագործական ձկնորսության սպասարկման մուտքի և ելքի կետերի ընդհանուր թիվը՝ 25: 2023 թվականի համար արդյունագործական ձկնորսության պայմանագրեր չեն կնքվել, որս չի իրականացվել: ՊՈԱԿ-ի հատուկ նշանակության ջոկատի կողմից իրականացվում է շուրջօրյա հսկողություն և հայտնաբերված իրավախախտումները արձանագրվում են: Մասնաճյուղերի կողմից պաաբաժիններում գարնանային հերթական և վերստուգիչ ստուգումները կիրականացվեն 2-րդ եռամսյակում: Իրականացվել են հանրության իրազեկման աշխատանքներ «Սևան» ազգային պարկի հարակից 41 համայնքներում: «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից կազմվել է «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի հրդեհների արձագանքման պլան, որը համաձայնեցվել է ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության համապատասխան տարածքային ստորաբաժանման հետ և հաստատվել	31.12.2023թ.	79 375 458

			Ազգային պարկի տարածքում գտնվող հանրային լողափերի սպասարկման և պահպանման աշխատանքների վերահսկողություն:	ՊՈԱԿ-ի տնօրենի կողմից: Կահավորված հանրային լողափերի քանակը՝ 3, այցելուների թիվը՝ 0: Չկահավորված № 4, №5, № 6, № 7 և № 8 հանրային լողափերի համար հայտարարված մրցույթներում հաղթողներ են ճանաչվել № 4, №5 և № 6 լողափերի համար: Հաղթողների հետ կնքվել են լողափերի բարեկարգման, սպասարկման և կահավորման պայմանագրեր և ներկայումս ընթանում են նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ:		
2	Պարկի տարածքում գիտական հետազոտություններ և էկոհամակարգի վերականգնմանն ուղղված միջոցառումներ	• Աշխատանքային պլաններով նախատեսված գիտական հետազոտությունների իրականացում, հարող բնակավայրերի բնակչության շրջաններում էկոլոգիական իրազեկություն, էկոդաստիարակութուն և խախտված էկոհամակարգերի վերականգնմանն ուղղված միջոցառումներ	• Գիտության և մոնիթորինգի բաժնի աշխատակիցների կողմից աշխատանքային պլաններով նախատեսված գիտական հետազոտությունների իրականացում. • Մեծ Սևանում, Փոքր Սևանում, Սևանա լիճ թափվող Դրախտիկ, Ձկնագետ, Գավառագետ, Ծակքար, Մասրիկ, Արգիճի, Լիճք, Վարդենիկ, Մարտունի գետերի ջրերի որակի ուսումնասիրություն, մանրէաբանական, հիդրոքիմիական և հիդրոֆիզիկական հետազոտությունների իրականացում. • Ձկան և խեցգետնի պոպուլյացիաների ուսումնասիրություն Մեծ Սևանում և Փոքր Սևանում. • Սևանա լճում և դրա ջրհավաք ավազանի գետերում Ասանի կողակի ուսումնասիրություն, հաշվառում, և վերականգման միջոցառումների մասնակցում (հիմք՝ շրջակա միջավայրի նախարարի 2021թ. ապրիլի 13-ի N 120 հրաման). • Էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների գույքագրում, հաշվառում և մոնիթորինգ.	• Նախարարության կայքում հրապարակված գիտական ուսումնասիրությունների և հետազոտությունների վերաբերյալ հաշվետվություններ՝1: • Ձկների կենսաբանական ցուցանիշների, դրանց տարածական տեղաբաշխման և կենսապայմանների, խեցգետնի վերարտադրման առանձնահատկությունների, պոպուլյացիաների չափատարիքային և սեռական կառուցվածքի, բազմացման ժամանակաշրջանների, բեղունության ցուցանիշների վերլուծություն. • Գիտական ուսումնասիրությունների և մոնիթորինգի իրականացման ընթացքում ստացված տվյալների հավաքագրում, դասակարգում, տարածքների և բնական պաշարների օգտագործման հաշվառում, ամփոփում և վերլուծություն. • գիտական հետազոտությունների և	31.12.2023թ.	7 020 442

		• Ազգային պարկի թանգարանի աշխատանքների կազմակերպում և իրականացում. • խախտված էկոհամակարգի վերականգնմանն ուղղված միջոցառումներ	• «Սևան» ազգային պարկի տարածքին սահմանակից համայնքների բնակչության շրջանում բացատրական աշխատանքների իրականացում, Այցելուների կենտրոնի և տարածքի այցելուներին տեղեկատվության տրամադրում. • Թանգարանային ցուցանմուշների պահպանություն, խնամք և ցուցադրում. • գեղարքունի մանրածկան համալրում	հետազոտությունների վերաբերյալ հաշվետվությունների թիվը՝ 1 հատ: • «Սևան» ազգային պարկի տարածքին սահմանակից 41 համայնքների բնակիչների էկոլոգիական իրազեկվածության մակարդակի բարձրացում, 5 միջոցառում, մասնակիցների թիվը 218. • Բուսական ու կենդանական աշխարհի ներկայացուցիչների պատշաճ ցուցադրում. ՊՈԱԿ-ի այցելուների կենտրոնում առաջին եռամսյակում այցելուների թիվը կազմում է՝ 726:		
3	Պարկի տարածքում անտառտնտեսական աշխատանքներ	• Անտառագիտական և անտառտնտեսական միջոցառումներ՝ անտառվերականգնողական և անտառտնկման աշխատանքներ,	Մասնաճյուղերի կողմից անհրաժեշտությամբ պայմանավորված անտառագիտական և անտառտնտեսական միջոցառումներ, սանիտարական հատումներ և խնամքի աշխատանքներ	• տնկարկների խնամք և անտառվերականգնողական աշխատանքներ՝ «Սևան» ազգային պարկի տնկարանային տնտեսությունում ներկայումս առկա է մոտ 10 000 տնկի, որոնք նախատեսվում է օգտագործել 2023 թվականին նախատեսվող ծառատնկման աշխատանքներում: Վարդենիսի մասնաճյուղի Վարդենիս տեղամասի 15-րդ քառակուսում գտնվող բացատներում շուրջ 5 հա մակերեսով տարածքի վրա նախատեսվում է իրականացնել անտառապատման աշխատանքներ: Կատարվել է նշված տեղանքի քարտեզագրում և ներկայացվել է շրջակա միջավայրի նախարարություն:	31.12.2023թ.	
4	Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրում	Սևանա լճի ջրածածկ և ջրածածկման ենթակա տարածքներում թփերի, մացառների, ծառերի և կոճղերի արմատախիլ անում, անտառանյութի մասնատում և տեղափոխում	• Ջրի մեջ և ճահճացած տարածքում թփերի, մացառների, ծառերի և կոճղերի արմատախիլ անում, • ծառերի, արմատային զանգվածի հետափ հանում մեքենա-մեխանիզմների ձգաճոպանով կամ հետ քարշակում տրակտորով միջինը 200-300 մետր հեռավորության վրա՝ մեքենայի բարձման տեղ, • թփերի, մացառների, կոճղերի և արմատային զանգվածի բարձում լաստի վրա, տեղափոխում ափ և դատարկում, • էքսկավատորով կոճղերի, ջախի, թփերի և արմատային զանգվածի բարձում բեռնատար մեքենային,	Բնական ռեսուրսների արդյունավետ կառավարման պայմանների ապահովում, բույսերի և կենդանիների պահպանություն և վերարտադրության աճի ապահովում: Մեքենա-սարքավորումների միջոցով Սևանա լճի ջրածածկ և ջրածածկման ենթակա տարածքների պատշաճ մաքրման աշխատանքների իրականացում: Մաքրման աշխատանքներ չեն իրականացվել, քանի որ ներկայումս ընթանում են մաքրման աշխատանքների տարածքների և մակերեսների ճշգրտման աշխատանքներ:	31.12.2023թ.	

			• անտառանյութի մասնատում, • փայտանյութի, ջախի և արմատային զանգվածի տեղափոխում 5 կմ հեռավորության վրա: • աշխատանքների իրականացումը ըստ կցված քարտեզ-սխեմաների, • խոտածածկ, եղեգնածածկ, ավազե/քարքարոտ տարածքները մաքրման ենթակա գործառույթ չեն համարվում:			
ԸՆԴԱՄԵՆԸ						86 395 900

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ տնօրենի տեղակալ, տնօրենի պ/կ _____ Կ. Մնացականյան